Հաստատում եմ

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի

գիտության գծով պրոռեկտոր Պ. Ավետիսյան

«18» ապրիլի 2025թ.

ԿԱՐԾԻՔ

(առաջատար կազմակերպության)

ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Սուրեն Ռաֆիկի Պետրոսյանի *«Քաղաքական էլիտայի կերպափոխման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»* թեմայով ատենախոսության վերաբերյալ

Հաստատվել է

Հայ-Ռուսական համալսարանի Կ. Ա. Միրումյանի անվան քաղաքագիտության ամբիոնի 2025թ. ապրիլի 17-ի նիստում: Նիստին մասնակցում էին փ. գ. թ., դոցենտ Հ.Լ. Սարգսյանը, պ. գ. դ., պրոֆեսոր Ա.Ս. Մանուկյանը, ք. գ. դ., պրոֆեսոր Վ.Ս. Դավթյանը, ք. գ. դ., պրոֆեսոր Ա.Փ. Ենգոյանը, ք. գ. թ., դոցենտ Ն.Ա. Դունամալյանը, ավագ դասախոսներ Մ.Լ. Հարությունյանը, Ն.Ի.Մարգարյանը, Ի.Ա. Քարամյանը:

Սուրեն Ռաֆիկի Պետրոսյանի՝ (այսուհետ՝ Հեղինակ) թեկնածուական ատենախոսությունը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում քաղաքական էլիտայի կերպափոխման հիմնախնդիրների հետազոտությանը:

Արդի աշխարհում տեղի ունեցող շարունակական փոփոխությունները, որոնք ուղեկցվում են տուրբուլենտություններով և անորոշություններով, առանցքային դեր և նշանակություն են ստանում քաղաքական էլիտաները՝ որպես քաղաքական համակարգի կայունության ապահովման և քաղաքական զարգացման ճգնաժամերի հաղթահարման հիմնական դերակատարներ: Քաղաքական էլիտաների կերպափոխմամբ է պայմանավորված քաղաքական համակարգին նետված մարտահրավերներին համարժեք պատասխանելու կարողունակության բարձրացումն ու ռազմավարական ապագայի պլանավորման հնարավորությունը:

Ատենախոսության արդիականությունը հիմնավորվում է նրանով, որ Հայաստանի Հանրապետության անկախացումից ի վեր քաղաքական զարգացման ձգձգված ճգնաժամերի պայմաններում և ներկայիս իրողություններում, որտեղ Հայաստանի Հանրապետությանը և ողջ հայությանը նետված են մարտահրավերներ և գոյաբանական սպառնալիքներ, քաղաքական էլիտայի կերպափոխման հիմնախնդրի ուսումնասիրությունը դառնում խիստ կարևոր: Միևնույն ժամանակ, ՀՀ քաղաքական էլիտան շարունակում է մնալ ինչպես ժողովրդավարական անցման, այնպես էլ անցումից – համախմբում գործընթացի երաշխավորման գլխավոր պատասխանատուն:

Աշխատանքը կարևորվում է նաև պետության ինստիտուտների պատասխանատվության, հասարակական հարաբերությունների, իշխանության իրականացման մշակույթի և քաղաքական ինքնության արդիականացման թեմաների քննարկմամբ:

Ակնհայտ է, որ նմանօրինակ թեմայի գիտական համապարփակ ուսումնասիրությունը այսօր հրամայական է, քանի որ հնարավոր չէ ինչպես անցումից համախմբում, այնպես էլ քաղաքական համակարգի զարգացման և արդիականացման գործընթացը դիտարկել առանց Հայաստանի Հանրապետությունում քաղաքական էլիտայի կերպափոխման հիմնախնդիրների համակարգային վերլուծության:

Ներկայացված ատենախոսությունը կարևոր նախաձեռնություն է՝ համակարգված ուսումնասիրելու Հայաստանի Հանրապետությունում քաղաքական էլիտայի կերպափոխման հիմնախնդիները: Ուշագրավ է հեղինակի այն պնդումը, որ արդի քաղաքական զարգացումների անորոշության և տուրբուլենտ իրականության հաղթահարումը հնարավոր է քաղաքական համակարգի բնականոն արդիականացմամբ, որի հիմքում պետք է ընկած լինի ազգային ինքնությունը: Այդ համատեքստում քաղաքական էլիտաների կերպափոխման գործընթացն ուսումնասիրվել է գծային ազատականացման և ազգային ինքնության բնականոն արդիականացման զուգամիտմամբ:

Ատենախոսության մեջ առաջադրվել են թեմային առնչվող տեսական դրույթներ, քննարկվել, ընդհանրական կերպով բացահայտվել և վերլուծվել են էլիտայի ուսումնասիրման տեսամեթոդական հիմքերը անցում-համախմբում հարացույցի կայացման տիրույթում, քաղաքական էլիտայի կերպափոխման բազմավեկտորությունը և թավշյա հեղափոխությունը, որպես քաղաքական էլիտայի ժողովրդավարական կերպափոխման հրամայական:

Հեղինակը վերլուծել է քաղաքական էլիտայի հավաքագրման և ձևավորման առանձնահատկությունները հետխորհրդային կերպափոխումների համատեքստում, միևնույն ժամանակ որոշակիացելնելով ՀՀ-ում քաղաքական էլիտայի դերը՝ որպես ժողովրդավարության որակի երաշխավորի:

Արժեքավոր է հեղինակի կողմից քաղաքական էլիտայի կերպափոխման հիմնախնդիրներով պայմանավորված անտագոնիստական համագործակցության խզման պատճառների համապարփակ ուսումնասիրությունը: Այս առումով ևս կարևորվում է ներկա աշխատությունը:

Հեղինակն ուսումնասիրել է բավարար չափով մասնագիտական գրականություն, վերլուծել է թեմային առնչվող նյութերը, ինչպես նաև հետազոտությունն իրականացրել է կառուցվածք-դերակատար հարացույցի շրջանակներում, ինչը հնարավորություն է տվել անդրադառնալ խնդրո առարկա

հարցադրումներին և դրանց համակողմանի վերլուծության արդյունքներով առաջադրել որոշակի եզրահանգումներ:

Ատենախոսությունն ունի տրամաբանական կառուցվածք, այն հնարավորություն է տվել նախապատվելի համամասնությամբ անդրադառնալու նաև բազմաշերտ հարցադրումների քննարկմանը:

Ատենախոսությունում հեղինակը ցուցաբերել է ինքնուրույն հետազոտություն կատարելու, տեսական աղբյուրներից և գործնական նյութերից պատշաճ օգտվելու և ինքնուրույն եզրահանգումներ առաջադրելու կարողություններ:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, վերլուծված է նրա տեսական և գործնական նշանակությունը, ուսումնասիրության մեթոդները, շարադրված են նրա նպատակներն ու խնդիրները, մատնանշված է աշխատանքի գիտական նորույթը, կարևորված է տեսական և կիրառական նշանակությունը:

Ատենախոսության՝ «Էլիտաների ուսումնասիրման տեսամեթոդաբանական հիմքերը. Անցում-համախմբում հարացույցի կայացման տիրույթներում» խորագրով երկու ենթագլուխներից բաղկացած առաջին գլխում հեղինակը ուսումնասիրել է էլիտաները, որպես քաղաքական զարգացման գլխավոր դերակատարներ և քաղաքական էլիտայի հավաքագրման առանձնահատկությունները ժողովրդավարական անցումից համախմբման համատեքստում: Այդ դիտանկյունից հիմնավորվում է այն մոտեցումը, որ էլիտաներն ունեն գերակա դեր քաղաքական զարգացման ճգնաժամերի և անորոշությունների հաղթահարման, ինչպես նաև քաղաքական համակարգի բնականոն արդիականացման գործընթացներում: Այս մոտեցման շրջանակներում, ըստ Ս. Պետրոսյանի, բնականոն արդիականացումը, լինելով որակական փոփոխությունների պարբերային գործընթաց, ենթադրում է էլիտա – հասարակություն և էլիտա – էլիտա փոխհարաբերությունների շարունակական կերպափոխում:

Հեղինակը հիմնավորել է ժողովրդավարական անցումից համախմբումը՝ որպես ռազմավարական ապագայի և փոփոխության կառավարման բազմավեկտոր գործընթաց՝ քննադատելով գծային ազատականացման քաղաքականությունը, ՀՀ-ում ժողովրդավարական անցումից համախմբում գործընթացը ներկայացրել է որպես քաղաքական զարգացման ճգնաժամերի հաղթահարման հնարավորություն, որով աշխատանքն առավել արժեքավոր է դարձել: Այդ նկատառումներով հեղինակն ուսումնասիրել է քաղաքական արդի մարտահրավերներով պայմանավորված պետականաշինության մշակույթի զարգացումը, որպես ՀՀ քաղաքական էլիտայի ազատության և պատասխանատվության ինստիտուցիոնալացման և ժողովրդավարական համախմբման կայացման բաղադրիչ:

Ատենախոսության «Քաղաքական էլիտայի կերպափոխման բազմավեկտորությունը Հայաստանի Հանրապետությունում» խորագրով երկրորդ գլխում Ս.Պետրոսյանը քննության է առել Հայաստանի Հանրապետությունում քաղաքական էլիտայի կերպափոխման գործընթացը ժողովրդավարական անցման հարացույցի շրջանակներում: Ուսումնասիրել է Հայաստանի Հանրապետությունում քաղաքական էլիտայի կերպափոխման սահմանադրաիրավական հիմքերը: Ընտրական գործընթացը դիտարկելով, որպես քաղաքական էլիտայի կերպափոխման ինստիտուտ՝ համակողմանի վերլուծել է Հայաստանի Հանրապետությունում անցկացված բոլոր համապետական ընտրությունները: Ուշագրավ է այն փաստը, որ եթե ընտրական գործընթացը կրում է արարողակարգային բնույթ և միտված է միայն քաղաքական վերնախավի վերարտադրությանը, ապա այս պայմաններում անհնար է դառնում պարբերաբար դրսևորվող քաղաքական զարգացման ճգնաժամի հաղթահարումը: Փաստացի այն այդպիսին շարունակում է մնալ կանխորոշված ընտրությունների արդյունքների արարողակարգային ապահովման և քաղաքական ուժերի միջև դերային դասավորությունների պատրանքային լեգիտիմության և մարգինալ արդիականացման գործընթաց:

Որպես էլիտայի կերպափոխման ինստիտուտ, հիմնավորվում է այն մոտեցումը, որ ընտրական գործընթացն ունի կենսական նշանակություն Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգի արդիականացման և քաղաքական զարգացման ճգնաժամի հաղթահարման համար, որը, նվազեցնելով քաղաքական անորոշություններն ու տուրբուլենտությունները, բացառում է նաև լայն զանգվածների հեղափոխականացվածությունը: Այս դիտանկյունից կարևորված է ժողովրդավարական համախմբման արժեշահային համակարգի հաստատման գործընթացի ինստիտուցիոնալացման, սոցիալհոգեբանական, քաղաքակրթական և մարդաբանական գործոնները ՀՀ-ում:

Ս. Պետրոսյանը, վերլուծելով քաղաքական էլիտայի կերպափոխման հիմնախնդիրները, բացահայտել է այն գործոնները, որոնք ազդել են ՀՀ-ում քաղաքական էլիտայի ինստիտուտի կայացման գործընթացի վրա: Ատենախոսը համոզված է, որ անհրաժեշտ է ՀՀ-ի էլիտաների՝ որպես պատասխանատվության սուբյեկտների գործունեության ինստիտուցիոնալացումը՝ հատկապես հանրային քաղաքականության աստիճանակարգային և ցանցային կառավարման զուգամիտման պայմաններում:

Ատենախոսության երրորդ՝ «Հայաստանի Հանրապետությունում թավշյա հեղափոխությունը որպես քաղաքական էլիտայի ժողովրդավարական կերպափոխման հրամայական» գլխում, որը բաղկացած է երկու ենթագլուխներից, հեղինակը վերլուծել և հիմնավորել է այն մոտեցումը, որ ժողովրդավարության որակի ապահովման երաշխավոր է ՀՀ քաղաքական էլիտան: Այդ դիրքորոշումը հիմնավորելու նպատակով հեղինակն ուսումնասիրել է ՀՀ «թավշյա հեղափոխությունը» որպես «երկրորդ անցման» սկիզբ, որի ընդունելի ելք է ակնկալվում քաղաքական էլիտայի կողմից ժողովրդավարական որակի երաշխավորումը: Կարևոր է հեղինակի այն մոտեցումը, որ ՀՀ-ում «արդիականացում առանց զարգացման» հարացույցի կիրառման հետևանքով հաստատվել է «բարեհաջող ձախողում» (successful failure) երևույթը, որը հանգեցրել է պետական և քաղաքական

ինստիտուտներում անձնավորման, կլիենտելիզմի և հովանավորչական հարաբերությունների ձևավորմանն ու խորացմանը:

Հեղինակը քաղաքական էլիտաների կողմից ժողովրդավարության որակի երաշխավորման համատեքստում կարևորել է դելեգատիվ կամ պոպուլիստական ժողովրդավարությունից անցումը ներկայացուցչական կամ համախմբված ժողովրդավարության, այս առումով առաջարկելով ձևավորել ժողովրդավարության հայկական մոդել՝ տարբերակելով կառավարման քաղաքական և վարչական ընթացակարգերը:

Ամբողջացնելով քաղաքական էլիտայի կերպափոխման տեսական և գործնական հիմքերը և վերլուծելով հասկացության կառուցվածքային ու բովանդակային բաղկացուցիչները՝ Ս. Պետրոսյանն առաջարկել է «քաղաքական էլիտայի կերպափոխման ճգնաժամ» գիտական նոր եզրույթը՝ այն սահմանելով որպես քաղաքական զարգացման ճգնաժամի հաղթահարման և պետության ինստիտուտի բնականոն արդիականացման գերակայության շրջանակներում քաղաքական էլիտաների մարդաբանական, ռացիոնալ-իրավական և սոցիալ-հոգեբանական մակարդակներում համարժեք կերպափոխման անկարողության հետևանք:

Հատկանշական է նաև տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաների հարատև զարգացման համատեքստում հեղինակի առաջ բերած այն մոտեցումը, համաձայն որի արմատական կերպափոխումներին հավասարարժեք չարձագանքող էլիտաները զրկում են երկիրը ռազմավարական նպատակամետ կառավարումից:

Ատենախոսությունում համակողմանի ուսումնասիրվել և վերլուծվել են ի սկզբանե առաջադրված խնդիրները: Եզրակացություններում հանրագումարի են բերվել աշխատանքի հիմնական արդյունքները, կատարվել են հայեցակարգային բնույթի եզրահանգումներ և ընդհանրացումներ:

Սեղմագիրը լիովին համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և արտահայտում նրա հիմնական դրույթները:

Միաժամանակ, ատենախոսության առնչությամբ առկա են որոշ նկատառումներ, մասնավորապես՝

1. Տեսական մասը աչքի է ընկնում հարուստ բազայով, սակայն առկա են թերացումներ տեսություններն օրգանական կապերով համակարգելու, գնահատելու և տեղայնացնելու մասով: Շարունակաբար հիշատակվում են 20-ից ավելի հեղինակներ՝ Պարետո, Մոսկա, Միխելս, Դահլ, Միլս, Վեբեր, Շումպետեր, Լասուել, Սարտորի, Նորթ, Ֆուկույամա, Լիպսեթ և այլն: Թեև սա արտահայտում է թեմայի լավ իմացություն, սակայն խնդրահարույց է կառուցվածքային առումով: Կործում ենք, որ տեսական հատվածը ճիշտ կլիներ կառուցել ըստ էլիտարիստական ուսմունքների խմբերի՝ **դասական էլիտիզմ** (Պարետո, Մոսկա, Միխելս), **ժողովրդավարական էլիտիզմ** (Դահլ, Սարտորի), **քաղաքակրթական մոտեցումներ** (Հանթինգտոն, Օրտեգա և այլն), **ժամանակակից ինստիտուցիոնալիզմ** (Նորթ, Ֆուկույամա): Դա թույլ կտար ընկալել տեսությունների տրամաբանական հաջորդականությունը: Մյուս կողմից, բացակայում է տեսությունների քննադատական մեկնաբանություն: Օրինակ՝ ինչպե՞ս է Դահլի պոլիարխիայի մոդելը համադրվում կամ հակադրվում էլիտիստական մոդելների հետ՝ հետխորհրդային համատեքստում:
2. Եզրակացությունների բաժինը մեծապես պահպանում է վերլուծական տրամաբանություն՝ շեղվելով եզրակացական ձևաչափից: Որոշ եզրակացություններ նոր հիմնավորումներ ու փաստարկներ են ներկայացնում (օրինակ, 4-րդը), ինչը տրամաբանորեն տեղին էր ատենախոսության հիմնական մասում: Մինչդեռ եզրակացութուններում պետք է ներկայացվի միայն ստացված արդյունքների ամփոփումը՝ առանց նոր նյութի ներմուծման: Միաժամանակ, թեև եզրակացությունները տրամաբանված են, դրանցից շատերը ունեն տեսական բնույթ և չեն հիմնվում հստակ էմպիրիկ արդյունքների վրա:
3. Հաշվի առնելով աշխատության ընդհանուր բովանդակությունը (մասնավորապես առաջին և երկրորդ գլուխները) կարելի է եզրակացնել, որ հեղինակը կապում է

«ժողովրդավարացման» և «էլիտայի կերպափոխման» երևույթները այն պարագայում, որ ավտորիտար վարչակարգերում նույնպես կարող է լինել քաղաքական էլիտաների հավաքագրման տարբեր համեմատաբար արդյունավետ մոդելներ (Չինաստան, Սինգապուր, Եգիպտոս, Թուրքիա և այլն):

4. Օգտագործված են եզրույթներ՝ ″զծային ազատականացում″, ″արժեշահային ինդիգեն մոդել″, ″կոնվերգենցիայի ակադեմիական միֆ″ և այլն՝ առանց դրանց կոնցեպտուալ սահմանման: Մինչդեռ տեքստում յուրաքանչյուր եզրույթ պետք է սահմանվի առաջին անգամ գործածվելու պահին՝ հիմնվելով հստակ աղբյուրի վրա:
5. Հեղինակը նշում է, որ Հայաստանում 2018 թ.-ից հետո հաստատվել է դելեգատիվ ժողովրդավարություն (էջ 159), ինչը տեսաբանական կոլիզիա է ստեղծում՝ հաշվի առնելով, որ դելեգատիվ ժողովրդավարության կոնցեպտի հեղինակները մշտապես նշում են, որ այն հնարավոր է առավելապես նախագահական համակարգի պարագայում:
6. Նկատվում է կիրառական առաջարկների թիրախավորման բացակայություն: Շատ առաջարկներ ձևակերպված են ընդհանրական ձևով՝ առանց հասցեատերերի. ″կարևոր է մշակել ինդիգեն մոդել″, ″անհրաժեշտ է վերաիմաստավորել մշակութային մատրիցան″, ″պետք է ապահովել քաղաքական մշակույթի ժողովրդավարացում″ և այլն: Սակայն ովքե՞ր են այդ փոփոխության գործնական կրողները՝ իշխանությու՞նը, քաղաքացիական հասարակությու՞նը, կրթական համակարգը՞, ԱԺ հանձնաժողովնե՞րը, ուղեղային կենտրոննե՞րը: Դա հստակեցման կարիք ունի:
7. Ցանկալի կլիներ, որ հեղինակը ներկայացներ նաև սոցիալ-քաղաքական փոփոխությունների դերը ՀՀ-ում էլիտաների կազմի և կառուցվածքի վրա, չսահմանափակվելով միայն ֆորմալ սահմանադրական և ընտրական համակարգերի դերակատարմամբ:

Նշված թերությունները չեն նվազեցնում աշխատանքի ամբողջական գիտական արժեքը:

Վերոգրյալի հիման վրա, ինչպես նաև հաշվի առնելով թեմայի արդիականությունն ու իրականացված հետազոտական աշխատանքը, վերջնարդյունք եզրահանգումները և առաջարկությունները՝ գտնում ենք, որ Սուրեն Ռաֆիկի Պետրոսյանի քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Քաղաքական էլիտայի կերպափոխման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը բավարարում է նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն էլ արժանի է ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի
Կ. Ա. Միրումյանի անվան քաղաքագիտության ամբիոնի վարիչ
փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ /Հ. Լ. Սարգսյան/

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ Հ.Լ. Սարգսյանի
ստորագրությունը հաստատում եմ
Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի

Գիտական քարտուղար
բանասիրական գիտությունների թեկնածու Ռ. Կասաբարովա